բարիայի ամբողջ հայ ազգաբնակութեան մէջ, որի թիւը, ինչպէս ինձ ասացին, հասնում է հարիւր-հազարի, չէ կարելի գտնել մի հատ հոգի, որին կարելի լինէր ճշմարիտ հայ կոչել, թէպէտ նրանք բոլորն էլ շատ ջերմեռանդ և ժամասէր լուսաւորչականներ են: Գրեթէ մի հատ հայ չը կայ, որ հայերէն իմանար, չը կայ մի հայ, որ հայոց կեանքի վրա հասկացողութիւն ունենար, չը կայ մի հայ, որ Հայաստան բառը հասկանար, չը կայ մի հայ մանուկ, որ հայոց այբենարանը ձեռքում բռնէր,—մի խօսքով Բէսարաբիայի հայը ներկայացնում է իրանից մի անյայտ ազգութեան պատկանող արարած, որ խօսելով մոլդաւերէն՝ ինքն մոլդաւացի չէ, խօսելով յունարէն՝ յոյն չէ, գիտենալով թուրքերէն՝ թուրք չէ, ռուսախօսելով ռուսերէն՝ ռուս չէ. Նա հայ էլ չէ, որովհետև ոչ թէ միայն չը գիտէ հայերէն, բայց գաղափար էլ չունի թէ ինչ տեսակ լեզու է հայերէնը: Ուրեմն նա անորոշ մի ազգութեան պատկանող անդամ է, որ միայն մեքենայաբար յաճախում է քրիստոնէական մի եկեղեցի, որի մէջ քահանան ժամ է ասում մի լեզուով որ ոչ իրան է հասկանալի, ոչ էլ մէկ ուրիշին: Եւ ահա այն հայը, որին մեր կղերական մամուլը հայութեան տիպ կարող է աւետել աշխարհին, ահա այն հայը, որին ընդունակ եղաւ արդիւնաբերել ժամանակակից Էջմիածինը, որից դուրս, ինչպէս կրկնում են մեզ «Մեղու», «Պսակ» և «Արարատ» հայութեան համար փրկութիւն չը կայ: Իսկ ինչպէս է հոգում նոյն Էջմիածինը այսչափ մի մեծաթիւ հայութեան լեզուով և ոգով հայացնելու մասին, կարելի է տեսնել հետևեալից: Բեսարաբիայի վիճակը ունի եկեղեցապատկան կայքեր, որոնք դեռ շատ ժամանակ չէ տալիս են եղել Էջմիածնին տարեկան քառասուն հազար րուբլ արդիւնք: Խօսք չը կայ որ քառասուն հազարը մինչև Էջմիածին հասնելը, արդէն ճանապարհում մասամբ հալվում էր ուղարկողների ձեռքում և այդ գումարից գուցէ կէսը չէր հասնում տեղը: Մինչդեռ այժմ բարձի թողի արած կայքերը դարձել տալիս են տարեկան քսան հազար րուբլ եկամուտ, որից ամենքին անյայտ պատճառով Էջմիածինը նաղդ ստանում է միմիայն տասն և երկու հազար րուբլ: Բայց քառասուն հազար, թէ տասն և երկու հազար լինի այդտեղի եկեղեցապատկան կայքերի տարեկան դուտ արդիւնքը, դարձեալ մի բան անուրանալի է, որ մի հատ կոպէկ այդ ամբողջ գումարից չէ ծախսվում այն ժողովրդի կրթութեան գործի վրա, որի սեփականութիւնից ստացվում է այդ եկամուտը: Ահա այդ հարցին կուզենայի որ պատասխանեն Էջմիածնի «խնամատարութեան և ուսումնածաւալութեան» երկրպագուները. ուր են թափվում այդ և սրա նման բոլոր գանձերը, որոնք հոսում են դէպի Էջմիածին Հնդկաստանի Գանգէսի ափերից սկսած մինչև աշխարհի միւս ծայրը: Եթէ այդ բոլորը գործ է դրվում ճեմարանի վրա,— ես կարծեմ որ եւրոպական համալսարանների գիրքին նայելով, այդ բոլոր փողերով քսան համալսարան կարելի էր պահել և ոչ թէ մի ճեմարան, այն էլ լոկ անունով ճեմարան, որ գուցէ շատ լաւ դպրոց է, բայց այնու ամենայնիւ ճեմարան չէ, այլ մի հասարակ միջնակարգ դպրոց է մինչև այժմ:

Բայց ուրիշ բան էլ այստեղ և Օդէսայում իմացայ. ինձ հաւատացնում են, որ այդ փողերից ամենն էլ Էջմիածնում չեն, այլ նրանց մեծ մասը տոկոսաբեր թղթերի է դարձած, կամ տրված է շահեցողութեան նպատակով մայրաքաղաքների այս և այն հարուստ հայ կլէչսոփի ձեռքը, որ նրանցով իր գործերն է շինում և բիրժայի վրա խառատր խաղեր է խաղում, որի պատճառով ազգի առջև ազգասէր և բարերար, իսկ Էջմիածնի առջև նրա հաւատարիմ ղուլակ է ձևացնում իրան:

Իսկ այստեղ կայ մի հատ թշուառ ուսումնարան, մի քանի հատ աշակերտներով, որի ուսուցիչը ստանում է տարեկան երեք հարիւր րուբլ ռոճիկ, որպէս ողորմութիւն, այն էլ մի քանի արուեստաւորների, սափրիչների ձեռքից, այն ինչ քսան հազարը այստեղից է դուրս գալիս:

Հարցնում եմ՝ մեղաւո՞ր է արդեօք հարիւրհազարաւոր հայ ազգաբնակութիւն՝ իր հայութիւնից զուրկ դրութեան մէջ:

Մ. Շախմիեանց

ՆԱՄԱԿ ՆՕՎՕ-ԻՎԱՆՕՎԻՑ

Սեպտեմբերի 16-ին

Հայաստանցի սովատանջների համար, Ճամբարագ գիւղում ժողովեցի ներքոյ գրեալ պատւելի անձինքներից մի քանի րուբլի փող, որի գումարը, յիսուն և երկու րուբլի քառասուն կոպէկ ղրկում եմ ձեզ նամակիս հետ, խնդրեմ ստանալ և հասուցանել ուր հարկն է: Մի և նոյն ժամանակ հրատարակեցէք նուիրատուների անունները:

Անդրեյ Թումանեանց 3 ր., Արշէն Ապրէսեանց 3 ր., Ալէքսանդր Յարութիւնեանց 3 ր., Գրիգոր Սաղումեանց 2 ր., Սերկէյ մաչտեսի Ադարեկեանց 2 ր., Նիկոլայ Պօղոսեանց 2 ր., Ղաջի-Ախունդ Մոլլայ-Նաղի-Ղաղիզադէ 4 ր., Սասիբեկ Քալանթարեանց 1 ր., Ամրանլու աղա Շիխլինսկի 1 ր., Մամադ աղա Իսկանդարբեկով 1 ր., Ավշարեանց 1 ր., Ստարօսիվելսկի 1 ր., Սարգիս Շահինեանց 1 ր., Յարութիւն Ղազարեան 1 ր., Ճամօլ Յարութիւնեանց 1 ր., Արտեմ Մելքեանց 1 ր., Սարգիս Տէր Ազարեանց 1 ր., Սերկի Մանուչեանց 1 ր., Իվան Կարապետեան 1 ր., Վասիլի Սիմէօնեան 1 ր., Գրիգոր Խաչատուրեանց 1 ր., Ներսէս Բաղալեանց 1 ր., Մարտիրոս Ներկարարեանց 1 ր., Միքայէլ Խաչատուրեանց 1 ր., Բեկլար Բուլղադարեանց 1 ր., Պօղոս Խաչատուրեանց 1 ր., Մովսէս Բաբայեանց 1 ր., Մուսի Բաբաեանց 1 ր., Հայրապետ Աղաջանեանց 1 ր., Երեանդ Բէկվազեանց 1 ր. 40 կ. Արգման Վարդանեանց 1 ր., Փաշաբեկ Ռուստամբեկ-օղլի 1 ր. 50 կ., Յովհաննէս Եղիազարեանց 50 կ., Ամիրխան Սիմէօնեան 50 կ., Մ/քայէլ Աղայեանց 50 կ., Պետրոս Դանիէլեանց 50 կ., Յակովբ Վարդանեանց 40 կ., Սիմէօն Տէր-Մելքսէթեանց 50 կ., Աստուածատուր Տէր-Աստուածատուրեանց 50 կ., Գրիգոր Տէր-Աբրահամեանց 30 կ., Սիմէօն Սարգիսեան 20 կ., Ամր-Սանդրեանց 20 կ., Մկրտիչ Բուտուլեանց 20 կ., Միխայիլ Մամիկոնեանց 20 կ., Յօսէփ Ավալեանց 20 կ., Սարգիս Բաղինեանց 20 կ., Յօսէփ Զարկարեանց 20 կ., Յարութիւն Սարգիսեանց 20 կ.: Գումարն է 52 ր. 40 կ.,

Ալէքսանդր Շահինեանց

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Հոկտեմբերի 4

Կրօնական վիճաբանութիւնները, ինչպէս երևում է մեր պարբերական հրատարակութիւնների մէջ, ընդունում են վերին աստիճանի ծայրայեղ և անազնիւ կերպարանք: «Մեղուն» իր № 73-ի մէջ «Բաց նամակով» յայտնում է այն միտքը, թէ կրօնական խնդրի վերաբերութեամբ «Հայ-կաթոլիկ» ստորագրութեամբ յօդուածները «կեղծ» շինված են լինում «Մշակի» խմբագրատանը: Այն ինչ, այդպիսի ստորագրութեամբ մենք էինք թղթակցում Ալէքսանդրօպոլից ինչպէս մենք յայտնած ենք «Մշակի» № 127-ի մէջ: Այդպիսի պարզ զրպարտութիւն «Մեղուի» կողմից աններելի է, որովհետև այդ կը նշանակէ մեղանչել գրականական ազնւութեան դէմ: Եթէ «Մեղուն» սիրում է կրօնական վէճը, թող շարունակէ, բայց մենք ինչպէս արել ենք այժմ էլ կը հետևենք նոյն ուղղութեանը, որը է, ծառայել ազգային գաղափարի ընդհանրացնելուն, աշխատել որքան կարելի է կրօնական կուսակցութիւնների փոխադարձ յարաբերութիւնը միութեան սկզբունքին ծառայացնելու:

Ազգութեան գաղափարը մեր նշանաբանն է, մենք կը ջանանք այդ գաղափարը մեր մէջ արմատացնելու: Կաթոլիկ կուսակցութիւնը կրօնական վէճ չէ կարող անել, որովհետև, նա կատարելապէս ճանաչում է ներկան ապագայի համար:

Իսկ մի քանի զրպարտութիւնների դէմ մենք կը պատասխանենք «Մեղուին», եթէ նա սիրում է շարունակել կրօնական հալածանքը:

Պետրոս Բէպուրեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Հոկտեմբերի 4

Մեր մէջ եթէ տղամարդիկն էլ դիտաւորութիւն են ունենում կազմելու մի որ և է բարեպատակ ընկերութիւն, գործը սկսվում է հազար ու մի նեղութիւնով և հաստատվելուց յետոյ՝ հետևանքը սկզբնաւորութեան համեմատ չէ կատարվում: Մէկ էլ տեսնում ես ընկերութիւնը բաժան—բաժան ընկաւ և զանազան խռովութիւններ տեղի ունեցան: Եւ կամ գանձապահ անդամը նուիրատուներից փողեր ժողովելով և իր օգտին շահեցնելով—երկար լռեց, գործը հասցրեց վերին աստիճանի անտարբերութեան. այս դէպքում մի ուրիշը նորան հրապարակ հանելով, գործից նոր տեղեկութիւն է պահանջում. և այն ժամանակ մեր գանձապահը, թէ ժողովարարը աշխատում են մեղադրել միւսներին—օրինակ—ինձ ու քեզ, միմիայն իրենց արդարացնելու համար....

Այսպիսի դէպքեր յաճախ պատահում են Գանձակումն էլ: Այստեղ հազարից մի անգամ «Կանանց ընկերութիւն» էլ եթէ կազմվում է, գործը սկսվում է տղամարդոց ազդեցութիւնով և այդպէս էլ վերջանում: Ինքնուրոյն մտածութիւններ, ընկերական ձգտումներ, ազատ գաղափարներ և գործունէութիւն—մեր մէջ էլ չը կան: «Կանացի ամօթխածութիւն» և «մոքերի կաշկանդումն»—ահա մեր ճակատագրի վերնատողը....

Սակայն այս բաւական չէ:

Գանձակի բժախնդիր մարդկանց դասը մի ուրիշ կողմից էլ կարծես աշխատում է մեզ—տիկիններին էլ բժախնդիր կացուցանել և այդ քօղի տակ երևացնել: Իմ խօսքիս ապացոյցը վերջին հետևեալ դէպքն է, որ եղաւ առիթը սոյն նամակագրութեանս:

Տիկին Վառվառէ Մելիքեանցը «Մշակի» 171 №-ում խօսում է տեղոյս օրիորդաց դպրոցի ընկերական անդամուհեաց նուիրատւութեան վերաբերմամբ. Նա—որպէս «ժողովարար» նուիրատւաց ապառիկ փողերի ստորագրական թերթը երկու տարուց աւելի իր մօտ պահելով, վերջումս երբ տիկին Թ. Մ.... նրան հանդիստ քնից զարթեցրեց լրագրի միջոցով, յանկարծ մեր ընկերուհին նոյն լրագրի վերը յիշած համարում մեղը դրեց կամաւոր նուէրքը չը վճարող անդամուհիների վրա. և ինձ համար էլ ասում է. «տիկին Ղլէչեանցը թէև ստորագրված է վեց րուբլի և ոչինչ չէ տուել միայն ցուցակում գրել է ստացայ № 131 ապահովագիր. ում է տվել, ումից ստացել—ես չը գիտեմ:»

Ստորագրվող անդամուհիներից կարծեմ դեռ ոչ մէկը չէ ճանաչում տիկ. Մելիքեանցին որպէս «ժողովարար» ապառիկ փողերի. Նա գանձապահ չէ: Եւ ով է ցուցակը նրան յանձնել—ես չը գիտեմ: Այդ մասին «խօսք» և «ժողով» չէ եղած: Ես իմ կամաւոր նուէրքը յանձնել եմ դպրոցաց գանձապահ հոգաբարձուին դեռ անցեալ տարի; երբ ստորագրական ցուցակը ձեռքից ձեռք պտտում էր: Ստացել եմ դպրոցական հաշուեմատեանից ապահովագիր № 131: Ես չեմ թաքցրել ապահովագիրը—ինչպէս երազում է տիկին Մելիքեանցի նամակը: Լաւ չէր անի, եթէ ազնիւ տիկինը գէթ մի անգամ դիմած լինէր դպրոցաց գանձապահին կամ մատեանուն իր կասկածը փարատելու համար տեղեկութիւն ստանալու իմ ապահովագրի մասին, կամ միթէ նա չէր կարող մի անգամ գոնէ ինձանից տեղեկութիւն պահանջել և ըստ այնմ վարվէր իմ պատւիս նկատմամբ: Փառք Աստուծոյ, որ Գանձակում ֆայտօններ շատ կան:

Եթէ արդարև Գանձակում տիկինները ցուցակների հետ մողայի պէս են վարվում, ապա թող ներուի ինձ նոյն նկատողութիւնը անել ազնիւ տիկնոջ ժողովարարութեան վրա: Նա ապառիկ փողերի ժողովելը ամօթանք է համարում և ոչ ոքի չը դիմած պահանջելու, ասում է. «շատ անգամ խնդրել եմ, բայց բաւարար պատասխան չեմ ստացել». թէև ձեռն ընկած փողերն էլ նա երկար պահելով ու անապահով դպրոցին է հասցնում և ոչ էլ հրապարակ հանում նրա որքանութիւնը առանց ուրիշից առիթ ստանալու: Եթէ հարկ կայ չը տուողների ցուցակը երևան հանելու, նրանց պատիւը շօշափելու. ինչո՞ւ տուողների ցուցակը չը հրատարակեց և նրանց պատիւը բարձրացրեց:... Եւ եթէ մի քանի տիկիններ դեռ չեն վճարել իրենց խոստացած վճարը և դորա համար էլ այսօր լրագրի միջոցով նախատինք են ստանում. հապա այն ժողովարար տիկինը, որ ուրիշների նուէրքը 75 րուբլի (իր տալիքը՝ յայտնի չէ) պահում է իր մօտ—իր օգտին շահեցնում, որքան ուրեմն գովասանութեան արժանի պէտք է լինի....

Սորանով ես չուզեցի վիրաւորել տիկին Մելիքեանցին և նրա անձնականութիւնը շօշափել. իմ խօսքը մասնաւոր հաշւի վրա չէ, ինչպէս որ իր խօսքերը չէին....

Խմբագիր տէր, մեր մէջ միշտ այսպէս է: Սաեղ բան տուիր, էլ տիրոջը յետ տալ չը կայ. Նուիրեցէք, նպատակիդ յարմար չեն գործ դնում, ընդդիմացէք, վատ, անպիտան ու «բաբըշմաղ» ածականները անունիդ վրա կը շարեն. խօսեցէ՛ք, պատասխանեցէք, էհ, մախլաս....

Այս բոլոր սրտամաշ ճշմարտութիւնների վերականգնումը ձեզ եմ յանձնում, ձեր լրագրին....

Շուշանիկ Ղլէչեանց

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

17 սեպտեմբերի

Բաւական չը համարելով այն 600 րուբլից աւելի գումարը, որ անցած տարի ժողովեցաւ յօգուտ «Արարատեան» ընկերութեան Աստրախանի մէջ, և կամենալով մի փոքրիկ ծառայութիւն ևս իմ կողմից ցոյց տալ այն վսեմ գործին, որով Հայաստանի ապագան պիտի պայծառապէս փայլէ կրթութեան և դաստիարակութեան լուսով, և որին նուիրվել են մեր հայազգի, ազգասիրական հոգով վառված երիտասարդները, նախապէս նուիրելով իմ կարողութեանս չափ իմ փոքրիկ լուման ազգային գանձանակին, առաջարկեցի նոյնը և մի քանի իմ ծանօթներին, որոնք չը խնայեցին նոյնպէս իւրաքանչիւրը իր նուէրը ընծայելը յօգուտ «Արարատեան» (այժմ Միացեալ) ազգօգուտ ընկերութեանը, որոնք միասին ընդամենը կազմում են հարիւր տասն և չորս րուբլ գումարը, որը ահա ուղարկում եմ խմբագրութեանդ նուիրատուների ցուցակի հետ միասին, խնդրելով հասցնել ուր հարկն է:

Դարձեալ, յարգոյ պարոն, պարտաւորութիւն եմ համարում յայտնել ի լուր ընթերցողների, թէ անցեալ նամակումս, որով ուղարկել էի յօգուտ Վանի սովատանջների իմ ժողոված նուիրադրամները, մտել է իմ անուանս մէջ երկու անգամ տպագրական սխալ, ըստ որում փոխանակ տպագրվելու «Կարապետ Աթանասեանց», տպագրվել է Յարութիւն Աթանասեանց:

Նուիրատուների անունները. Յովհաննէս Սարգսեան Աւագեանց 15 ր., Եղիսաբէթ Յովհաննիսեան Աւագեանց 10 ր., Կարապետ Յարութիւնեան Աթանասեանց 5 ր., Իսահակ Կարապետեան Աթանասեանց 5 ր., Յովհաննէս Ազարէգեան Դողաղեանց 5 ր., Կարապետ Դուլեանց 10 ր., Արտաշէս Գրիգորեան 5 ր., Մելքոն Սարգսեանց 5 ր., Յովակիմ Ստեփաննեան Կիրգիզեանց 25 ր., Քաջանայ Աբրահամ Պօպովեանց 5 ր., Մարգարիտ Տէր-Գէորգեան Մատաթեանց 15 ր., Աւետիս Թումայեանց 5 ր., Յարութիւն Գրիգորեան Ստեփաննեան 3 ր., Անյայտ ոմն 1 ր.: Գումարն է 144 րուբլի:

Կ. Աթանասեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 6 հոկտեմբերի

Կարդալով ձեր լրագիրը 'ի միտ առինք Վանի հայոց գրութիւնը, որպէս զի դժբաղդաբար դեռ ևս նոցա մէջ շարունակվում է սովը, ուստի հարկ համարեցինք բանալ ստորագրութեան թերթ յօգուտ նոյն տարաբախտների: Մենք մեր կողմից շնորհակալութիւն ենք յայտնում նուիրատու պարոններին, որոնք ուրախութեամբ ստորագրեցին: Գոյացաւ գումար 317 րուբլի 10 կոպ., որը ցուցակով յանձնում ենք ձեզ և խնդրում ենք գումարը հասցնել ուր հարկն է և տպել ձեր պատուական լրագրիդ մէջ նուիրատու պարոնների ազգանունները:

Յակովբ Զառաեանց 25 ր., Յովհաննէս Վարդապատրիկեանց 10 ր., Եակոբ Զօհրապեանց 10 ր., Կոստան Խաչատուրեանց 10 ր., Գրիգոր Շադինեանց 10 ր., Վարդան Յակոբեանց 10 ր., Խաչատուր Ղըլըճեանց 10 ր., Յովհաննէս Թումեանց 10 ր., Սհակ Մովսէսեանց 10 ր., Սարգիս Բալադեանց 5 ր., Վաղարշակ Բալասանեանց 5 ր., Ալէքսանդր Ափրիկեանց 5 ր., Պարսամ Պարսամեանց 5 ր., Սարգիս Գասպարեանց 5 ր., Եղիազար Մուքայէլեանց 5 ր., Փանէս Տէր-Աբրահամեանց 5 ր., Բալադայ Եղիեանց 5 ր., Սենեքերիմ Ղազարեանց 6 ր., Ստեփան Ղօլթուղչեանց 5 ր., Գալուստ Գրիգորեանց 5 ր., Կիրակոս Վարիկեանց 5 ր., Հայ Տաղիկեանց 5 ր., Մինաս Պատրիկեանց 5 ր., Կարապետ Սալանեանց 5 ր., Յովհաննէս Ասլանեանց 5 ր., Աւետիս Խանաղեանց 5 ր., Աղաջան Մելիք-Ալաչվերդեանց 5 ր., Սիմէօն Եղիազարեանց 5 ր., Նիկոլայ Փանեանց 5 ր., Հայրապետ Աւետիսեանց 5 ր., Յովհաննէս Խալաթեանց 5 ր., Բաղդասար Վանէցեանց 3 ր., Ալէքսանդր Գօզալեանց 3 ր., Կոստանդին Անդրոնեանց 3 ր., Պաւէլ Ղատարչեանց 3 ր., Յովհաննէս Մանասեանց 3 ր., Սարգիս Ղալանեանց 3 ր., Դաւիթ Դաւիթեանց 3 ր., Մկրտիչ Գալստեանց 3 ր., Ստեփան Բամբալեանց 3 ր., Գրիգոր Յօսէփեանց 1 ր., Յովհաննէս Միրաքեանց 3 ր., Պետրոս Կարափեանց 3 ր., Նիկոլ Մամասախլիսեանց 3 ր., Նիկոլայ Յակոբեանց 3 ր., Գէորգ Ղազարեանց 3 ր., Բախշոյ Եղեազարեանց 3 ր.